



ԻՔ առաքինիք աստուտին իսկ զանա-
մահութեան վայելիցն առնուն զճա-
շակ : Արարք նոցա զյոյզ ընդ անուանցն
զըղոյմին յարձանա իմն ազամանդեայս
անեղծանելիս, անգամազիարք ժանեաց
ժամանակին և կամ ձեռին թշնամույ մինչև 'ի
սպառ : Եւ ի թէ սուրբոյ այդ գործք յօգուտ մտաց
և լուսոյ ևս իցեն լեալ, յայնժամ կրկնակի ժա-
ռանգեցցեն զանմահութիւն . զի այլ ամենայն
երախտիք մարմնաւորք՝ առժամանակեայք են և
անսակաւանք . իսկ որ առ միտան՝ անեղծք ընդ
նմին : Եթէ երբէք զրկեայք 'ի լուսոյ՝ խաւարաւ
տգիտութեան մածանիցին միտք, չէ մարթ թէ
կայցեն միասցեն այնպէս ցլակնման . եկեղեցի
ժամանակ՝ զի խնդրիցէ եւանել անդրէն 'ի լոյս .
և իսկ և իսկ զիպեացի յայնժամ յիշատակի եւ
բախտաւորացն իւրոց :

Եւ ո՛յց առաւել 'ի զէպ եւանեն այս բանք,
քան 'ի սկիզբն և 'ի ծնողս զպրութեան մերոյ՝
'ի սուրբ թարգմանիչս . որոց վեհագոյն է յիշա-
տակ 'ի առերկանս մեր յաչս սիրողաց իմաս-
տութեան, որ ազդ առնէ ակնածութեամբ հայել
'ի շուք արբանեկաց իւրոց, 'ի պսակն անմա-
հութեան՝ զոր բոլորեաց 'ի ճակատս նոցան
մշտափթիթ ծաղկամբք . « Լուսաւոր և անթա-
ռամ եմ »¹ Եւ, ասէ ինքն իսկ իմաստութիւն
որ 'ի նոյայն բնակէ : Պատմեցից եւս զծաղկաց
որ երևեցան յերկրի մերում, և զորոց չև էր ա-
ռեալ ցայնժամ աշխարհ մեր զանուշահոտու-
թիւն . զորթոց մերոց ազնուաց ծաղկելոց՝² որք
հայկեանս զաւակաց ընծայեցին ողկոյզս համե-
ղաճաշակս, յորոց կթեցաք զանուշակն ըմպելի
գիտութեան և զաստուածպաշտութեան : Արք

հոյակապք և չնաշխարհիկք, յորս բազում ինչ
աշխատ եղեն երկրորեանդ՝ կրօնք և իմաստու-
թիւն, և արարին կազմեցին որ ինչ ենն :

Ամենայն իսկ զարք պատմութեան մերոյ
մեծարեցին զնոսա : Գեղեցիկ խորհրդով և
ազն և եկեղեցի կարգաց զնոսա թարգմանիչս .
և խորիմաց բանիւզ ուսուցին զնոսա յանդիմա-
նիչս զոյ և աւանդիչ ամբալ զանձուց հանճարոյ
և մտաց, հայրենի բարբառոյն և պատմու-
թեանցն, պէսպէս զիտութեանց, այլովքն հան-
դերձ, և վարուց առաքինութեան՝ նախ 'ի զը-
նացս իւրեանց, և ապա 'ի զիրան շայեկանս
լցեալս յորդառատ իմաստիւք : Զեն իմ կամբ
զեզերել աստէն 'ի ճառս կենաց նոցին՝ որ
թաւոր իմն է յեղիցեղով՝ ազգիպզգի պանծալի
կամ եղբրական հանդիսից ըստ խաղուց բախ-
տին . այլ սուլ բանիւք յուշ առնել զերախտիս
նոցին առ կարօտեալ հայրենիսն, և ապա զայլ
'ի խոկումն կարեւոր ինչ հանգամանաց վաստա-
կոցն :

Ա. ի սկզբն բանիցս ընդ առաջ լինին ինձ
անապատք երկու յաշխարհի մերում . անապատս
տգիտութեան՝ որ և սասակազոյն, և անա-
պատս՝ բնակութիւն միանձանց³ 'ի Գողթն,
որք առժամայն զառաջին նուագ ընդ առաջ եւ
ղեն զարշապարուց հարց մերոց յանցան յերկրի
նոր, յերկրի աւետեաց, 'ի լուսաւորն հայ
աշխարհ : Այլ քանի՜ խախտ մեծ ընդ երկու-
սեանդ : Յառաջնումն չէր ինչ այլ տեսանել՝
բայց համակ ամայութիւն և միապաղաղ ոչըն-
չութիւն, լքուցիչ հոր իսկ բազկի ձեւնամուխ
եղելոյ 'ի նորին յարգարումն : Սա ինքն է
պայման ազգի՝ անգոստին 'ի ծագաց ժամանակի

1. Իմաստ. Զ, 13:

2. Երգ երգաց, Բ, 13:

3. Խոր. Գ. Խէ. — Կոր. 'ի վէնտ. 1833, յէջ 7:
— Ղ. Փրպ. 'ի վէնտ. 1873, յէջ 34:

գրելոյ 'ի համարի ե խառնելոյ 'ի գործս հոգա-
կեիս ազանց անաւորաց ե փառաւոր հանդի-
սացելոց 'ի վերայ երկրի, յոր չիցէ գտանել
'ի նմա յիշատակ ինչ յայտնի՝ նախնոյ գերա-
պանծ հանճարոյ կամ իմաստութեան, չգիտեմ¹ :
'ի կորուստ յուզարկեալք՝ եթէ քնաւ իսկ չառ-
սեալ զլոյս ¹ - ազգի, զորոյ առ 'ի գնչակ
նախկին 'ի մէջ ժողովրդոցն ճանաչել՝ նշխարս
ինչ մուրացածոյս ընդ քերթողահօր մերում
յարտաքնոյ անտի պատմութենէ կարօտիմք
առնել ծայրաքաղ. յորոց սակի են ե մարտա-
սեանն կազակարծ հատուկներք :

Չէ հնար ապաքէն յուրաստ լինել զյառա-
ջագիմութենէ նորին յայլ ե այլ ձիրս գտելիս,
ե զանուն առաջի երեւելի երեւելի արբունեաց՝
որոց ոմանց ապաւէն իսկ երբեմն ընծայեցաւ ² .
թող զայլ կցորդութիւնսն ընդ նոսին՝ որ ե 'ի
զիպաց այտի յայտ յանդիման երկն : Այլ ազէ՝
դուք՝ տեսէք զո՛ր ինչ նշոյլս գիտութեան եթող
մերոց թարգմանչաց 'ի դրունս անդ հինգերորդի
դարուն՝ յառհաւաստեայ իւրոյ հանճարոյն,
բայց յոգորմ՝ մնացուածոյ տղիտութեան մածե-
լոյ զոլորտիւք հայրենի աշխարհին զօրէն մա-
ռախոյղ. ամենայն ընդ անխախտ վիմով մա-
ռացութեան կամ չքութեան թաղեալ մինչեւ
ցնշանագիրս . զորոյ զվասն զանուսումնասէր
բարուք թագաւորացն մերոց առաջնոց արկանէ
խորենացի : Չհն իմ բանք զԱթաթանգեղայ
կամ Չհնոբայ կամ զՓառառոսէ Բիւզանդաց-
ւոյ՝ զօտարազգի ե զօտարալեզու պատմչաց
(որպէս ե հաւաստեալս կարծի)՝ զեռ իսկ անցելոց

'ի մեզ անցից, որք ե աղաւաղեալք համարին
յետ չորրորդի դարուն՝ յորում յօրինեցանն .
այլ զկանուխ ե զհայազաւուն հայաբարբառ մա-
տենազրացն ստեմ :

Արդարեւ առ մեծաւն ե սքանչելին Տրդատաւ
յանկարծակի իբրեւ զկայծակն յանթեղէ 'ի վեր
երեւեցաւ սէր ե ուսումն գիտութեան շանիւք
նորին սրբոյ ³ . որպէս զի հայ որբոյ առաքե-
լոյ 'ի ժամանակին 'ի Յոյնս յուսումն գիտու-
թեանց, հանճարով ե բանիւ իւրեանց սասա-
նեցուցանել 'ի պայքարս բանից զհելլեն ու-
սումնակիցս իւրեանց՝ իբրեւ զնազխանդացին
Գրիգոր, մինչեւ յօգնութիւն կարգալ նմա զԲար-
սեղ ⁴ . ե Պրոքերեսեայ վարդապետ հանդիսա-
նալ վեհագունիցն յիմաստունս Յունաց՝ Գրի-
գորի աստուածաբանին, Բարսղի ե այլոց, ա-
ռասայորդ ճարտարախօսութեամբն ընտլ զգիրս
ե զլսելիս Հոռոմոց ե այլոց ազանց Եւրոպէի 'ի
գաւառս գաւառս նորուն, յինքնակալ Յուլիա-
նոսէ կոչիլ՝ « Այր յորդաւաստ 'ի բան՝ զօրէն
գետոց խաղացելոց ընդ դաշտ ընդարձակ, այր
զուգակշիռ Պերիկղեայ ճոռմաբանութեամբն », ե
'ի սէզն 'ի հեթանոսն 'ի Հում կանգնել
նմա արձանս պղնձի ե կարգալ յարձանագրին՝
թագաւոր ճարտասանութեան ⁵ . Այլ սորայս
յալողութիւն ե փառք՝ անօգուտք հայրենեաց .
ե առաջնոցն անամահիկ ե անարգասաւոր՝ առ
հեղգ ե եպերանաց գնացից յալորդացն Տըր-
դատայ - որով ե ընդ կենաց իմն նորին զրաւ
եղեւ վաստակոց իւրոց . մանաւանդ առ 'ի չօյն
հայրենէն նշանագրութեան՝ որում միայնոյ
մարթ էր մշտնջենաւորել զվաստակ ե զիղձս
իմաստասէր արքային . որպէս զի եթէ զիրս եր-
բէք 'ի յոյն կամ յասորի լեզու թողին որեարն
յիշատակեալ, կորեաւ անհետացեալ կամ խառ-
նեալ յօտար մատենագրութիւնս՝ իբրեւ զՊրոքե-
րեսեայն :

Դոյնորինակ ե էւս զուզնաբեայ ե անօգուտ
ջան 'ի զործ արկաւ յաւուրս ե 'ի ձեւն մեծին
Ներսիսի ⁶ 'ի զարգացումն գիտութեան . բայց

3. Ազա՛. 'ի Վենտ. 1862, յէջ 625 :

4. Մատենադարան հայկական թարգմանու-
թեանց շ. Գ. Վ. Զարբ. 1889, յէջ 6 :

5. Հայկական հին զպրութիւն՝ շ. Գ. Վ. Զարբ. 1886, յէջ 237 :

6. Փաւստ. Բիւզ. 'ի Վենտ. 1832, յէջ 77 :

1. Խորենացի գերկրորդդ զայդ գնէ (Ա. Գ).
այլուր յուշ առնէ ե զսյրեցած յոյն գրոցն 'ի
Մերութեանայ (Գ. 12, Ծ՛) : — Իսկ մեք յա-
նելումք. եթէ զուզնաբեայն այն անվերժանելի
բեւեալգիր քանդակք երեւեալք զարդիս յաշ-
խարհի մերում՝ իցեն օտար ձեռին գործք, որ-
պէս հաւանեալս եմք, ամենին իսկ ճմարտին
բանք քերթողահօրս. ապա եթէ մերոց իշխանաց
հայկազանց, թէպէտեւ փոքր մի արդարապէս
հաւքն մեր առաջինք, այլ ստգտանաց են ար-
ժանիք յալորդք նոցա՝ վասն ապախտ առնելոյն
զայնու նշանագրովք ե զսովորութեամբ արձա-
նագրելոյ նոյիմք զգործս իւրեանց, ե 'ի մա-
ռացոնս մատենելոյ այնուիկ ե զգիրսն ե զգործս :
2. Տոմրիթ, Ա. - Եսայի, 1է. - Խոր. Բ. 2Ա :

և այն նմանեցաւ բոցոյ մերձեցելոյ 'ի լապտեր զիրկ յիւրոյ, որոյ բորբոքեսցի պատրոյգ իւր ցամաքեալ և նոյն հետայն շիջանիցի ։ Եւ եթէ զոյգն ինչ յարկեանց այոց ջանից կայկայեցաւ երբեք, այս ինչ է՝ զի գիտութիւն 'ի վանորայս և ի զանխուլ մեծաստանս եւթ եգիտ կայ իւրոց ծանրազանգող զարշապարաց, եթէ և այլ իցէ հաւաստի ։ Եւ յերեւել թարգմանչացն չորդ անգամ և բարբառ և զրեան Յունաց, խափանեալ գողով խտրի պատուիրանաւ Պարսից յիւրեանց մասնէն, և բնաշինձ բարձմամբ 'ի բոլոր աշխարհէն անպուտ 'ի ժամանակաց Մերութեանայ և այսր ¹ : Վասն որոյ երկիր Հայկալ գեւ 'ի մթան կայր, անապատ էր տակաւին ։

Օ՛ն անցեալ նկատեցուք զմիւս ևս անապատ, այլ մանաւանդ զանապատս Գողթան ։ Օթեւանք 'ի նոսա ըստ նկարագրին պատուաց՝ էին քարանձաւք և անշոյս արգելանք, յորս դիւրագոյն և արագ արագ թափ անցանէ լուսաւորութիւն անսկիզբն արեգական ։ Անդամոր մեկուսի մարդ 'ի խառնամբոխ խուժանէ և յաղմկիչ հոգոց, ընդ Աստուծոյ խօսի, ընդ անմուռն հրաշակերտ տարերս բարբառո՞ր յակնարկելն 'ի նոսա օր լսաւ օրէ 'ի բացական տարածութեան անդ վայրաց, լէ գլեղեւ նոցա, ուսանի ճառս խորին և հրաշապատումս զմեծութեանց՝ զգեղոյ և զօրութեան արարին ։ — Զպարտիմբ մոռանալ՝ զի բազումք յանուանի և հանձարեղ մարդկանէ նմանեաց Ոսկերեքանի՝ յանապատէ ծագեցան ։ — Այլ իսկ վայրք են տեղի բնակութեան արանց լուսաւորչաց մերոց, որք հոգւոյ և մտաց արգասաւորութեամբն իւրեանց յամայնո՞ր նախանձուկս արկանէին 'ի զինաւէտ այգեստանս Գողթան. այստ ակն ունէր տունն թորգոմայ իւրումս պայծառութեան ։ Մի՛ ինչ մեք մուտ 'ի ներքս այդ արասցուք, տեսանել՝ ո՛րք ոմանք իցեն անդ. այլ զնոյն ինքն զբնակչան արտաքս կոչեսցուք ։

Եւ ահա զայ 'ի դուրս՝ առ 'ի չղաւնայոյ միւսանգամ 'ի ներքս, այր մի, ունելով զհետ իւր երամ երիտասարդաց ² ջնրամբոյն և կայտառ իրեւ զնա, նմանեալ առիւծաւ ելելոյ ընդ կորեանցն 'ի ծակուց վիմաց ։ Մարդ իցէ եթէ

հրեշտակ՝ ոչ գիտեմ՝. այր մի ճգնատուն և խաբազնազգեստ, զմեծ մասն կենաց սպառեալ յայրս և 'ի փապարս առ սէր փրկին, գոռադեալ 'ի մարմին՝ այլ հուժիւր 'ի հողի, կազմ 'ի կատարումն անմահական և անզուգական խորհրդոցն՝ զիտի նշանագրաց և պնելոյ զնոսա 'ի հիմունս անպրոգնելիս տանն իմաստութեան, զոր 'ի մահի ունէր կառուցանել. և որ ոչ ուրուք ցայնժամ ելեալ էր 'ի սիրտ ։ Առ որ բարբառեալ 'ի ծածուկ ոգի իմաստութեան՝ խելաւմուտ արար զնա անխրկալ այնր ճանապարհի որ տանէր 'ի լոյս ։ Դա այն գետ է՝ որ բղխեաց 'ի ծարաւուտ երկրի ³. բղխեաց յանշէնս Գողթան՝ որպէս զանուշակ ծորանս հնժանաց նորին, և 'ի վտակս վտակս բաժանեալ՝ անց արբուցանել զանապատս տպիստութեան և դամալութեան հայրենեաց ։ Առոյցեալ յուռթացաւ և ծաղկեցաւ աշխարհ Արարատայ. « ձմեռն անց » այնուհետեւ. և յայնր նշանակ՝ « ձայն տատարակի լսելի եղև յերկրի մերում » ⁴. աղաւնոյ՝ որ ոստ 'ի բերան աւետեաց ձիւնեւոյ, ձայն տայ նահապետին թորգոմայ ելանել յանձուկ տապանէ առաւսպելայօղ և աղշամղջին ժամանակի անցելոյ՝ յընդարձակութիւն մտաց և լուսոյ ։ Այս եկեալ կարգայ առ իւր նմանին միւս ևս տատարակ, դադարեալ 'ի ծագ փառաց՝ 'ի վերայ աթոռոցն հայրապետականաց ։ Ընթացակիցք թերևս երբեմն 'ի փորձ զինուց և մարտից ⁵, բնթացակիցք և այժմ 'ի հոգեւորն և 'ի բանաստեղծութիւն, զուտեր 'ի խաչ փոխեալ և զտէգ յեղէգն. երգեն և նուագեն, թողեն զուշ և զլսելիս հայ մանկաւոյն, և ձգեն զհետ իւրեանց զհասակն դիւրամէտ 'ի սուրբն այն հրապոյր ։

Առ 'ի ճոխ և ազլոդագոյն բանիւք առաջի առնել ձեզ պնանատակութեան հանդիսի Մեսրոբայ և իւրոցն զնկարագիր, ընտրեմ են լուսեւթ կալ աստանոր. նախ՝ զի ակններէն է բոլորն բոլորեցունցդ. երկրորդ անգամ՝ ո՞ր բան բաւական կայցէ ճառել զմեծաց և զանապատում իրացն, զճգունս մեծի վարդապետին առ 'ի գիւտ նշանագրոցն, զիտոյ և զիտութս ահագինս, զտազ

1. Խոր. Գ. ԾԻ.

2. Բազմավէպ. Հտ. ԾԱ, յէջ 9 :

3. Եսայի, ԼԵ, 6 :

4. Երգ երգոց, Բ, 13 :

5. Կոր. յէջ 6 : — Փրպ. յէջ 33 :

նայալիցն, զստատմութեան վարանացն, գան-
հանգիստ երթեկեացն 'ի կողմանս կողմանս,
զքնանչելի գիտէն, և սպա գտիւ և զգիշեր
տընութեանց ընդ մեծին Սահակայ 'ի գումա-
րեւ գասս գասս մանկտոյ ընդ ամենայն գա-
ւառս Հայոց՝ վրաց և Աղուանից, 'ի կարգել
զնոսա յառումն զպրութեան՝ և 'ի վերայ նոցա
վերակացուս զիր աշակերտան, այլովքն հան-
դերձ: Այս ամենայնի չգուցէ ծայր և սպա
ռուած՝ եթէ կամիցիմք թուել զիրարանչիւր,
և զմիոյ միոյ 'ի նոցանէ ճառել արժանապէս և
Չեկաց չերեկացաւ ուրեք այր վաստակաւոր իբրև
զՄեարդը 'ի քործ անդր լուսաւորութեան, և ոչ
իբրեւ զՍահակ յիւրում՝ ապամանի ¹: Մեարդը
ստել կամ Սահակ՝ և զպրութին Հայոց՝ և ընդ
մի համար. և ո՞րք յայլոց ազգացն իմաստնոց
ստացաւ զայս պարծանս: Չիք որ, չիք ուրեք:

Անմոռաց կայցուք առ նոցոք և զյիշատակ
թարգմանչացն առաջնոյ երջանիկ գառուն, և
զանմահ զուգապատիւ զործակցութիւն ընդ իւ-
րեանց վարդապետին և ընդ հայրապետին. և
ըստ նոցանէ զերկրորդի գասուն, որք միան-
գամայն հատեալ զծով և զցամաք և շուրջ եկեալ
ընդ աշխարհս և ընդ քաղաքս երեւելիս, աւար
հարին զամենայն իմաստս և զպիտութիւն իւ-
մաստնոցն Հելլենաց և զԱսորոց՝ զորէն ճար-
տար գողցոց, ոչ շատ ինչ ընդհատ գողով յա-
րանց անտի աւագաց՝ յիմաստնոց և 'ի ճար-
տարախօսաց 'ի տուրս հանճարոյն, 'ի բանս և
'ի գնացս, արբեալ գոյով 'ի նոյն և 'ի մի աղ-
բերաց՝ յորոց և նոքայն: Ո՞րք մէջն տգիտու-
թեան, ո՞րք ստուերքն առաջինք: Երկիր մեր
անապատ՝ այնուհետև զայտ էր ծաղկածին.
մինչև 'ի բուն կէս և անգրագոյն ես հինգե-
րորդի դարուն՝ մեծապայծառ ճեմարան արանց
հելլենաւարժից և գիտնոց, հանգոյն Էքզիսոյ,
Բիւզանդիոյ, Ալեքանդ և այլոց քաղաքաց, ու-
րոց աքաւա ճոխութիւնք 'ի նա եղեն վարեալք:
Փոխանակ առասպելացն ոնտեաց՝ իմաստու-
թիւն ճարտար 'ի շրթունս նոցա, և ընդ օտա-
րոտի լեզուաց՝ բնիկն և մայրենին զորմեալ
'ի մատենան: Աշխարհք շրջակայք ակնկառոյց
այնուհետև կային 'ի մերս ² առաւել քան զոր
մերս երբեմն 'ի Յունացն:

Անպուգական և փարելի և հռչակելի զործ
թարգմանչաց մերոց սրբոց, միանգամայն ասա-
ցից, է՝ 'ի սակաւ ժամանակի սկիզբն առնել
լուսաւորութեան, յառաջ վարել՝ փութոյ պըն-
դութեամբ հարթելով զամենայն խոլընդոտն, և
'ի կատար բարձրութեան՝ 'ի ծագ կատարման
ժամանակն ցուցանել: Այս ամենայն այնպէս ա-
րագ արագ կատարեցաւ և աւագ՝ վանճանե-
ցաւ, զոր օրինակ յանկարծերեւաց և վազան-
ցով իմն տեսիլ 'ի թատեր: Այդ յետին ան-
կումն ողբալի՝ եղեն արգասիք այլոց ցաւագին
անկման, զորմէ յետոյ ուրեմն: Աստա՛նօր
միտք եմ՝ ընթանան 'ի խղիւրս ինչ կարեորս,
որք հայիցին յերախտիս նոցուն սրբոց թարգ-
մանչաց. եկից զնոցօք, եթէ իցեն բանք իմ
արժանի ձեռումդ ունկնդրութեան:

Բ. Սովորեցան ոմանք ասել թէ հարք հին-
գերորդի դարուն խոնարհագոյնք իցեն քան զեր-
կտասաններորդին՝ անձնիւր գիտութեան կամ
հմտութեան և հանճարոյ մասամբ, քանզի սա-
կաւագոյն թողին մեզ պիտ յանձնէ յօրինեալս
քան զայնոսիկ. այլ 'ի թարգմանութիւնս ան-
զուգականք, զորմէ չիք երկբայել:

Սակայն իցէ՞ արդեա՞ք ճշմարիտ բանն տա-
լին: Ինձ այսպէս թուի՝ թէ չիցէ այնպէս.
քանզի ահա նախ առաջին տեսանեմք՝ զի ա-
մենայն հմտութիւն վերջնոցն՝ մասնաւոր
պատմականն և մեկնողական՝ 'ի զորոց հնոցն
թարգմանչաց, և յաւէտ 'ի մեծափարթամ
արտաքին մատենից թարգմանելոց ընդ ձեռն
նոցա եղև ստացեալ. որպէս և տեսանել զբազ-
մացն ոչ իմաստից և եթ նոցուն, այլ համբուն
և բանից և տառիցն հետեւել ³. — Թո՞ղ գտա-
ղապականն քերթողութիւն, զորմէ ասէ
Գր. Մարգարոս 'ի քերականին՝ թէ « յիս-
մայեականացն գտեալ գտա՞ քաղում ջանիկ կըր-
թեցաք, նախ զորոյն և լեզուի, և սպա ա-
րունասին »: Իմա՞ զայն տաղաչափութիւն որ
արտաքոյ է քան զհինն հայկական — Եւ
յայտ իմն և ապաքէն՝ զի թարգմանիչն տե-
ղեակք էին կամ լինէին ամենայն հմտու-

նից Մեարդը հնարեցաւ: Կոր. Եթ 18, 18: —
Խոր. Գ. ԾԴ:

3. Տես 'ի շնորհ. Ներսէս, 'ի Սարգիս, 'ի Ն.
լամբր. և յայլս, և առ հասարակ յամենայն
համբռնէ պատմիչս զհինաւորեց ժամանակաց:

1. Յուլիք, 1869. Ա. Եթ 311:

2. Անգամ և զնշանագիրս Վրաց և զԱղուա-

թեանցն այնոցիկ՝ անդէն իսկ ՚ի յեղուն զայնոսիկ ՚ի հայ : Նա և զի՛նչ վախճան իցէ յեղլոյն , բայց եթէ պարպել զալ զուսամբ նոցին : Երկրորդ անգամ , ո՛չ ապաքէն շատը ՚ի թարգմանչաց յակն իսկ զեղեբեցան երկար ա՛մօք աղբբրացն իմաստութեան՝ յորոց իմաստնացան յետինք : յակն արկին զբազում զիրս սրբազան և հեթանոս մատենագրաց , և զայն , պիսիս իսկ՝ որոց կորուսեալ չհասին ՚ի ձեռս սոցա : Նա և առ այնչափ հմաութեամբ նոցին օտար լեզուաց՝ քանի՛՝ ոմանք ՚ի սոցանէ նշա՛նաւորացն իսկ ասեմ՝՝ տեղեակք կացին նոցա , բայց կարի սակաւք , և այն՝ յունարենին եւթ շատը այն իսկ են՝ զի ՚ի հնոց թարգմանութեանց իմաստնացան : Այս իսկ են պատճառք հարցն որ յետ հինգերորդի դարուն՝ ՚ի բազում իրս զբանս նոցա ՚ի վկայութիւն ՚ի մէջ ամեւլոյ և պատկառանքով յիշտ խօսելոյն զնոցանէ :

Բայց զի սակաւ մեզ զիրս թողին նոցա իւրեանց շարագրածս , այնր բազում պատճառք են , զորս զիրաւ մարթ է ՚ի միտ առնուլ՝ եթէ միանգամ ակն արկանիցեմք յրիթացս պատմութեան ժամանակին : Յամէ չորեքհարիւր և ութ՝ այն ինքն է թուական դիտի Մեռութեայ տառից , մինչև մօտ ՚ի չորեքհարիւր քան և հինգ , որ է սկիզբն պանդխտութեան թարգմանչաց , յասպարէզ գործոյ ելանէին եւրիցազոյնքն և եթ ՚ի թարգմանչաց , — զի կրտսերքն զեռ տղայք էին մատաղ , — նորոգ հասեալք յարբունս և կարօտք տակաւին հրմտանալոյ ՚ի բազում գիտութիւնս , և ընդ նմին զբաղեալք յուսումն սղածրի մանկանց՝ և ՚ի ծաւալումն լուսոյն իմաստից , ոչ ՚ի միտմ կալով վայրի , այլ հատուածեալք ՚ի բազում կողմանս՝ առ սակաւութեան իւրեանց և մեծի կարօտութեան պիտոյից : և ահա յայդմ և ՚ի զոյն պայմանի չէր ակն ունեւ ՚ի նոցանէ մեծ ինչ և յոլով զրաւոր երկոց :

Ուր ուրեմն սակաւ ոմանք առաքին ՚ի թարգմանութիւն իբր ՚ի քառասնամեան տիս : Անդամօր պարապեալք նախ ՚ի կատարեալ ուսումն լեզուաց ինչ և ապա յանպառ թարգմա-

նութիւնս բազմահատոր և ազգիազգի գրոց , դարձ առնեն յետ իբր ինն ամաց . ուր ոմանք թերեւս ոչ յոյժ անազան և ոմանք զկնի ՚ի հոմիութիւն կարգին առ կարեաց եկեղեցւոյ , և ըմբռնեալ ՚ի հոգս և ՚ի զմբաղ՝ խափանին ի գրաւոր վաստակոց . Մեքոթք իսկ ՚ի սփիւսս հայաստանեայց քարոզէ միշտ . և ոմանք անդրէն ՚ի թարգմանութիւնս անդրաւականս դառնան՝ . և յայնպիսում պոյմանի որչափ ինչ պարապ գտանէին հարքն սուրբք , զնոյն և եթ ՚ի վար առնոյին ՚ի յօրինուած գրոց :

Անդէն վաղվաղակի առաքին և կրտսերքն թարգմանիչք ¹ , յորոց ոմանք կատարեալ զբնութեան՝ դարձ առնեն ՚ի հայրենիս՝ թերեւս ոչ յոյժ կանուխ քան զնշանաւորն թուական չորեքհարիւր յիսուն և մի ² , և ոմանք յետ այնորիկ ³ : Արդ այսպէս մինչեւեւ դասքն երկու-

3. Կոր. 20, 21, 16, 21. — Խոր. Գ. Կ :

4. Խոր. Գ. ԿԱ, ԿԲ :

5. Եղիշէ ակնաստեռն էր դիպաց ժամանակին (տպ. Վենտ. 1893, յէջ 9, 28) . Արքա համ և Խորէն ՚ի նմին վկայեցին (յէջ 350-368) : — Եղիշէի չէր մարթ եպիսկոպոս զոյ յայնժամ , որպէս կարծի յոմանց , և այլ ոմն է միեալն յԱրտաշատու տողովի . այլ ըստ պատմութեան վարուց իւրոց՝ (Սոփերք, ԺԱ) զպիր Վարդանայ կամ քահանայ Հայոց գնդի , որում ՚ի դէպ ելանէ լինելն ընդ գորուն ՚ի զբան Պարսից (Եղշ. յէջ 28) , որ չէր անկ առն եպիսկոպոսի :

6. Խորենացի և Դաւիթ դարձ առնեն յետ պատերազմին՝ առ Գիւտաւ ըստ 6 շնոց և նորոց ոտեառն Գարեգնի Սրբանձտեանց (69, 81) և նախադրութեան ներքողինի խաչին , յետ երեսուն ամի եղելոյ յԱթէնս՝ ըստ այլում օրինակի նոյն յիշատակարանի՝ առ Եղիայի գմիւռնացւոյ՝ (՚ի փականգիծս կայ այդ թիւ ամաց) , որ է իբր եթմանասենմի , եթէ չիցէ այդ նորակերտ կամ առաւելազանց , որ և ընկալուչ չգտանէ ինքեան ըստ իւրումն պատմելոյ (Բ. ՂԲ) : Եւ Խորովիկի դեռ ՚ի ճանապարհի , փոխանակ ձայնի սիրելեաց՝ զմահաբեր ճպթիւն աղեղանց լսէ ասելեացն թարգմանչաց (Ղ. Փրպ. թղթ. յէջ 609) . և այդմ ապաքէն չէր մարթ լինել՝ եւթէ կենդանիք էին վարդապետք իւրեանց ՂԼեռն դեանք և սքանչելին Վարդանանք : Եւ ևս , Սոփ. Աղշնկ. (Բ. Բ) զՄամբրէ և Գիւտիթ առ Վահանաւ ասէ դարձեալ . որ ճշգրիտ ևս էր ասել առ Գիւտաւ որոյ բանիւ զրեաց զԲարձրացուցէքն :

1. Տես ՚ի Թովմ. Արծր. տպ. ՚ի Կ. պոլիս, 1852, յէջ 47. և ՚ի յետակայ պատմիչսն

2. Կոր. 10, 14, 16, 18. — Խոր. Գ. ԾԳ, ԾԴ, Կ :

քին լցեալք իմաստութեամբ՝ և նորոգ հմուտութեամբք հաւաքելովք 'ի հօգեհոութեան անդ՝ կամէին պտուղս գեղեցիկս և յորդադոյնս ընծայել հայրենեաց՝ յիւրեանց հանձարոյնս, մեծարոյն քան զամենայն արքելս՝ ամենեցուն առ հասարակ յանկարծակի իմն բառնի խաղաղութիւն աշխարհին՝ շարժմամբ աշխարհաւոր պատերազմին, և խափան լինի նոցա։ Եւ զիւրոջ մարթ էր նոցա յայնժամ՝ 'ի վարատեւ և զիշատեւ հօտին՝ նստել խաղաղիկ և յանհոգ՝ և զբաղնուլ նորանոր շարագրածովք առ 'ի կենդանութիւն մտաց ժողովրդեան, ուր մարմնոցն բարձեալ էր կենդանութիւն։ Ոչ միայն չկացին յանդորու, Խլլ որպէս յայտ է, թողին 'ի բաց զգրիչ և 'ի խռան զինուց ընթացան. և կէսքն 'ի նոցանէ սրով վախճանեցան. այլ ամն դէմ եղ յանապատու։ Իսկ որ դեռ յօտարութեան նստէին, իրեւ զարձան և նոքա, աւերեալ զսին զհայրենիան՝ զոր թողեալ երբեմն էին 'ի շուք և 'ի գեղ վայելչութեան. և առ պառնութեան սրտին զանխուլ կեանս կամ զարտասուս արարին իւրեանց ապաւէն, անբաւականք առ այլ ամենայն։ Ոչ ահ խորենացի 'ի բազում ամաց մթերեալ առ իւր զամենայն վաղնջուց յիշատակարանս պատմութեան Հայոց, ժողովեալ յարտաքին պատմութեան՝ կանուխ իմն խորհրդով 'ի վեր հանելոյ զնոյնս 'ի մի գիրս¹, յետո կայ 'ի կատարմանէ խորհրդոցն առ աղիաից տարակուսանացս այսոցիկ, և չլինի միւսանգամ ձեռնամուխ 'ի նոյն՝ մինչ չև աղերսեալ 'ի բազրատունուայն Սահակայ մերձ 'ի վախճան իւր²։ Նոյն ինքն ցանգ և « անպարաս » 'ի թարգմանութեանց » էր։

Ահա զի՛նչ պատճառք սակաւութեան անձնիւր երկոց թարգմանչացն։ Ուր չդուցէ օղ, չմտանէ անոր լուսաւորութիւն արեգական. և ուր չիցէ խաղաղութիւն կենաց, չմտանէ անոր լոյս գիտութեան. և եթէ մոտեւ իսկ երբեմն իցէ, չառնու ծաւալ և սպառի, առ ծաւալելիսն

1. Զայս ասեմ զմտաւածելով՝ զի չէր նմա մարթ զամենայն յիշատակարանս զտեալս ընդ ամն երկար՝ բան առ բան յուշի ունել, և յեղակարծու թ ժտել այլում՝ առժամայն 'ի մատենի հարկանել զայնչափ պատմութիւն. բայց եթէ նախահոգակ հանգերձանգը։

2. Խոր. Ա. Ա. և Գ. Կէ։

և եթ զաղարեալ։ Ընդ ժամանակս խաղաղութեան թարգմանչաց՝ որպէս տեսաք՝ ամք հաւուստ ծախեցան 'ի պայծառութիւն ժողովրդեան և 'ի զարգացումն գիտութեան 'ի նմա. նոյնչափ ինչ ապա և 'ի թարգմանութիւնս յօտարս և 'ի հայրենիս. զորին աղազու բազմաբոյնք 'ի զրոց նոցին յետ կիսոյ հինգերորդ դարուն յօրինեցան։ Եւ ահա անդէն 'ի կիսում յառնէ ամբարտակ առաջի գեղեցիկ ընթացից նոցա տաղնապն դառն և շիոթ 'ի ժամանակի՝ յորժամ միաք թաթաղուն բազմամեայ հմուտութեամբք՝ թեթեւացեալ յայլ վաստակոյ՝ 'ի գեղանել կայր, առ կրցերուն մանաւանդ։ Ամենայն զարուսեանց, զոր օրինակ քնարական քերթութեան՝ իբրև 'ի մերս Գողթն, ճարտարաօթութեան՝ որպէս յայլ ագինս 'ի հնունձն, այլովքն հանդերձ՝ խաղաղութիւն է աղբիւր իսկ ընտ աղիւսեղութեան և ստուերաց՝ խռովութիւն։ Նա աւանիկ զի՛նչ իցեն երկրորդի կիսոյ հինգերորդի դարու գրեան մեր, բայց յաճախաբոյն ճառք խռովութեան. այսպէս Էջիչիկ, այսպէս և Էջիչիկ՝ որ մարառումն է բնորդեմ ազանդոց յարձակելոց 'ի վերայ քրիստոնէութեան. սոյնպէս և Ղազար փարպեցի և այլք և։ Պատմութիւն իսկ խորենացոյ յօղբս յանգի վասն նորին ժամանակի։

Այլոցիկ իսկ են պատուականագոյնք ի գանձու հնոյ զարուսեան մերոյ ընդ այլոց սակաւուց, որպիսի ինչ ծանօթքն են ցարդ։ Այլ են յաւելից ասել. 'ի զէպ էր թէ և այդ և այլ են գրեանք ոմանք չէին ելեալ 'ի լոյս. և յայնժամ մարթ էր թերես ասել՝ թէ թարգմանիչքն մեր ամենեկին իսկ գիրկ էին յիմաստից և 'ի հանձարոյ մտաց։ Եւ այս ապաւէն խոտորնագոյն ևս լինէին կարծիք և դատաոտան՝ քան զասել, հարք հինգերորդին 'ի ստորև իցեն քան զերկոտասան դարուն։ Եւ էր արդարև մարթ՝ չլինել և այլոց զրոց, եթէ չէր արանց ոմանց ակաւաւորաց յիշելոց 'ի պատմութեան՝ յորդոր լեալ հարցն բեկիւրոց և կալուկապ եղելոց 'ի հոգս ծանունս՝ գրելոյ զնոսին. քանի շատք 'ի թարգմանչաց առ հայցուածոց այլոց գրեցին, որպէս պատմէ իւրաքանչիւր զանձն. զոր օրինակ, Էդրիւն՝ Յովսէփայ կաթողիկոսի (յէջ 4). Դաւիթ զնեբրոյ իսաչին՝ Գիւտայ կաթողիկոսի (104—2). Մովսէս՝ Սահակայ բազր. որպէս

կանխեցի տեսել. և զտիրամօրէն՝ ՍՆկյ. արծր. Եղիշէ՝ Գաւթի երեցու (5). Ղազար փարպեցի՝ վճահանայ մեծի (15), և որ այլն ևս: Ապա զիրս յաճախազոյն և կամ ոչ մի իսկ չթողուլ՝ ոչ է յամբութեան, այլ այլոց պատճառաց: — Քանի՜ մեծարանաց արժանիք են և արքղ այդ Մեկեանաց՝ և ո՞րչափ շնորհաց առ ՚ի մէնջ, որք յորդորն լինելով ՚ի գրէ՝ զանձինս իմն կա- ցուցին զրիչս զրոցն այնոցիկ: Որոց զլուս եկաց ամենեցուն ՚ի զարուն՝ յաւրժ յիշատակաց արժանին վճամշապուն, ինքեան նախ տեղե- կացեալ զիւտի տառիցն առ Դանիելի, և առա- քեալ բերելով զնոսին, կարգելով վարժարա- նաց, հաւաքմամբ մանկուսոյ յուսումն, և խրա- խուսելով զիմաստունսն ՚ի զործ¹, որում չև ևս եղ ազգն զարժանին շուք: Բայց մեք անդրէն ՚ի կարգ բանիս եկեացուք:

Շատ ինչ թերեւ պատճառս իրաւացիս ՚ի մէջ բերի զսակաւութենէ զրոց թարգմանչաց. այլ այդ ամենայն չէ ինչ առ այնու՝ որ առաջի կայ ինձ ստել. այն է կորուստ ցաւալից՝ յա- լերիչ ասպատակութեանց անողորմ՝ բարբարո- սաց յայխարհ մեր, որ զէպ եղեն ընդ այլ և այլ ժամանակս, ՚ի գերութեանց, հրկիզու- թեանց և յայլոց զիարդուպէտ արկածից. և որ ևսն է, ընդ ձեռն ակամարաց ոմանց անմոխից՝ ազգակցաց մերոց, որոց ակներև են պատմու- թիւնք: Բազումք յայն զրոց ՚ի միջոյ հոյս և սրոյ եկին ՚ի լոյս, և ՚ի վախճանի ՚ի նոյնս անդրէն ընկուզան անդարձ: Երբին (յէջ 21) ճառս բազումս ընծայէ մեծին Մեսրոբայ: Մով- սէս (Գ. Կ) զիրս աւանդէ յօրինեալ Յովսեփայ պաղնապոյ ՚ի Բիւզանդիոն ընդ Եզդկայ: Կի- բակոս (17) զիրս յոլով՝ ասէ՝ Թողեալ Եզնը- կայ: Արծրունին թուրման գնէ միւս ևս զրուսայ չորորդ՝ պատմութեանն Մովսեսի (5, 82): Գիրս մի պատմութեան ՚ի Մամբրէէ (47): Միւս ևս՝ (47) ՚ի Թէոդորոս .քերթողէ՝ որ է ՚ի կրտսեր թարգմանչաց անտի²: Եւ համառօ- տութիւն մի (88) յԱբրահամէ՝ նահատակացէն

Խորենայ, զոր է իմանալ պատմութեան Հայոց: Առ Եղիայի զմիւսնացոյ պատմի գրեալ Ղա- զարայ փարպեցոյ զիրք մի Հայոց ճարտասա- նութեան³. Ի մեր իսկ ժամանակս չև ՚ի ձեռս հասեալ՝ կորեաւ ծովակուր միւս ևս մատենն անյայտ Եզդկայ « Թաղազս որոշման զանազան հերձուածոց », ընդ այլ յոլով անծանօթ զրոց: Եւ զի՞ մի մի ասիցեմ. ահա կան և այլ բազում անուանք զրոց. և բազմազոյն ևս նշխարք մեծ կամ փոքր, զոր օրինակ՝ այլ ևս զրոց Եզդկայ⁴. ուրոյն մեկնութեանց քերականի ՚ի Խորենաց- ւոյ⁵, Դաւթէ և Մամբրէէ՝ ՚ի զրչապի բա- ղուածոյս նոցին ընդ ձեռն Մագիստրոսի, երզնկացոյն Յովհաննու և այլոց. յորոց եր- կոցունցն՝ Մովսիսի և Դաւթայն դեռ ևս ողջ մատենանքն կային առ Երզնկացոյ՝ ըստ ասելոյ նորին ՚ի յառաջաբանի անդ քերականին իւրոյ. է և հասուած մի ՚ի Մարկոսի աւետարանին մեկնութենէ՝ Յովհաննու մանդակունոյ՝ ՚ի ճառընտրի միւում⁶, և այլն. սակայն գրեան

3. Զդոյն Աբէլ վգ. Մխիթարեան ՚ի Թղթի ուրեք առ ոմն ՚ի մերոց՝ տեսեալ ասէ ՚ի մատե- նագարանին Էջմիածնի. այլ գիտէ զնա յանուն Եզրասայ անգեղացոյ՝ և ոչ Ղազարայ:

4. Բազմապէս. Նտ. ԾԱ, յէջ 167:

5. Մնացորդք Խորենացոյ քերականին յի- շատաւորք ընդ անուամբս Մովսեսի քերդու- դահօր, կամ սոսկ Մովսեսի, չիթիին թերեւ ընդ հատուածոցն Մովսեսի քերթողի սխեմեցոյ և քնաւքն սմա գրին: Բայց մեր ուշ եղեալ զը- տաք խտրի ցած ՚ի մէջ ոմոյ երկոցուն. յորոց Սինեցոյն ցանդ և հանապազ յետ սղազոյն ինչ քերական բանից՝ իսկ և իսկ յատուածայինն ելեալ յարմարեալ յանգին. և Խորենացոյն ան- խտոր յար ՚ի քերականս բերին: Եւ ևս նշանք ընտրութեան ՚ի միջի, զորոց չէ ՚ի զէպ երկայնաբան լինել աստէն: Այսչափ ինչ շատ լիցի ասել՝ զի ամենայն մնացորդք՝ արտաբոյ ու- եոյ Սինեցոյն՝ Խորենացոյ են անկ, որպէս մեզն թուի:

6. Դոյ ՚ի նշխարիդ բան մի հակիրճ՝ յա- նուն Սարգաւազ վարդապետի (յԺԲ դարու), ածեալ ի մէջ առ ՚ի վկայութիւն, որ կարծիս տայ յինելոյ բովանդակ իսկ հատածոյն՝ Ման- դակունոյ: Այլ հանդէպ սկզբան և վախճանի այդք. կարճառօտ բանի եղեալ կան ՚ի լուսանցս գրչաբրին նշանք ինչ, որ զատանեն զայն ՚ի բանից անտի գրելոց Մանդակունոյն. ըմբոն

1. Կոր. 8, 9, 12: — Խոր. Գ. ԾԲ, ԾԴ:

2. Չիք ինչ յիշատակ և կամ ցոյցք՝ զԱրծ- րունի տոհմէն ևեթ լինելոյ պատմութեանցդ Մամբրէի և Թէոդորոսի, որպէս և ոչ Մովսի- սին՝ զոր առ նոսին գնէն. այլ զՀայոց առ հա- սարակ ՚ի զէպ է համարել:

ամենեցուն զոցա չեն 'ի միջի : Այսորիկ յիշա-
տակեալքն . իսկ չյիշատակեալքն քանիսն եւս :
Նա եւ են , որ արդ ես յայտնեցան խառն ընդ
թարգմանութիւնս վիճակեալս 'ի նոյն աղէտս ,
յորոց եւ տպագրեցան եւս . եւ են աներկբայ ա-
ռաւելագոյնք ' չե 'ի յայտ եկեալք , ե 'ի տեղիս
տեղիս լքեալք անտես եւ անիւնամ կամ ան-
ժանօթք 'ի մէջ ' ակն ունելով մահու . կամ
յարութեան : Արդարեւ քան մրիալից ժամա-
նակին թարգմանչաց մեծ եւս է կորստեանդ
զեան . որպէս զի եւ բազմագոյնք 'ի ճողպարեւոյն
'ի ձեռաց սորին թերիք կամ աղարտեալք հասին
առ մեզ : Այսպէ ինչ անհաւանութեան ասել ' զի
զէթ առանց ճիշդ ֆաստ մատենագրութիւնք
հինգերորդին փարթամագոյն լինէին մեզ քան
զայլ ամենայն դարուց առանձինն . թո՛ղ զը-
թարգմանութիւնսն ամբաս եւ զանագանս ըստ
նիւթոցն :

Շարայարեղի

Իսկ սակաւդ այդ առ մեզ հասեալ գրեան
այնպէս է յաչ մեր , որպէս աղամանդ յաչս
մեծատանց աշխարհի : Գանձ անդին են այնո-
քիկ , եւ շատք առ հանդիսանալ մեզ վիայ գեր
'ի վերոյ հանճարոյ իմաստութեան եւ մտաց
հարց մերոց , եւ առ անմահացանիւ զփառս
նոցա : Թէպէտ եւ չիցեն բոլորեքեան առանձինն
շտեմարանք ուրոյն մասանց կամ ուղղացն զը-
պրութեան , այլ բաց 'ի պէտպէս թերութեանց
ինչ , որ արգասիք են ոչ կարի յառաջագէմ
զարգացման դարուն ինքեան իրեւ զմերս , լի
են խոր հմտութեամբք պատմականին , իմա-
տասիրականին , բանաստեղծականին , նկարա-
գրականին , ճարտասանականին , բնաբանակա-
նին , հանդերձ այլովք բազմօք խառնելովք ընդ
միմեանս զեղեցիկ յօդս : Թէ կամիք , մանր
իսկ հաշուեցուր :

Հ. Վարդան Սոմոնեան

ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ ԸՆԾԱՑՈՒԱԾ

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ ՅՈՅՆ ԲՆԱԳԻՐՆ

ԵՒ ԱՆՈՐ ՎԵՐԱՅ ԵՂԱԾ ԿՐԿԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

(Տես հտ. ԾԱ Ե՛ջ 565)

ԱՅՅԺՄ տեսնենք թէ՛ լատիներէն եւ հա-
յերէն խմբագրութիւններն ի՛նչ աղերս եւ հա-
մեմատութիւն ունին իրարու հետ :

Լատին խմբագրութիւնն՝ 48. Սաղմոսի
« Մարգ ի պատուի էր եւ ոչ իմացա » , եւ
այլն , խօսքերով կը սկսի , եւ Արուսեկի ծագ-
ման եւ անկման պատմութիւնը կ'ընէ A, B,
C, Թուահամարներու մէջ . իսկ D եւ E Թուա-
համարներում՝ նախամարդոյն խաբուելուն եւ
զրախտէն արտորուելուն վրայ կը խօսի , որոնք
հայերէն թարգմանութեան , այն է Ի. Ոս-
կեփորիկի մէջ կը պակսին : F. Թուահամա-
նի՝ թէ 'ի Ժողովողէ ճառընտրին եղէ այն մու-
ծեալ որպէս 'ի դէպ վայրի , եւ սեփական նիւ-
թոյ բանից հայրապետին . զի զԸ՛ջ այլ յայտ առ-
նիցն առընթերակայ նշանէ քան զգոյն :

1. Տպգր. Լուգոնի 1677 :

րին առաջին տողով կը սկսի կատարեալ համա-
ձայնութիւնն երկաքանչիւրոց մէջ , այսինքն է
բառ առ բառ նոյն են : Լատ. վերջի զատաս-
տանի պարբերութեամբ կը վերջանայ , որուն
առաջին տողերը նոյն են հայ թարգմանութեան
յէջ 68 չորրորդ , եւ այլն տողերուն , բայց
տասն տողի մէջ կ'աւարտի . մինչդեռ հայն 6
երես տեղ մի կը զբաւէ , որոնք նոյնպէս կը
գտնուին Միսրոք երիցու Պատմագրութեան
մէջ , բառ առ բառ :

Անուանց եւ տարեթիւոց , — այսպէս եւ մի
քանի էջ առանդութեանց մէջ , — շատ տարբե-
րութիւններ կան . օրին . Լատ. յէջ 729 , Նոյի
որդին Lonitun կ'անուանէ , որ հայերէնի մէջ
Մանիստն գրուած է : Վերջոյն ճշգրութիւնը
կ'ապացուցուի այնու եւս զի Միքայէլ ասորին
այսպէս կ'ուղղագրէ : Բ. Լէոն Ալլատիոսի քով